№ 34 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1894 № 34

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց կրթութեան հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ռաշտից. Նամակ Շիրազից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Բանասիրական. Փայտակարան կամ Ղարադաղ դաւառը.—Յայտարարութիւններ:

ԿԱՆԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

—

Անցեալ կիրակի օր Թէհրանի հասարակութիւնը բաղդ ունեցաւ լսելու այն քարոզներից մէկը, որոնցից նա այնքան զուրկ է, և որոնք այն աստիճան հարկաւոր են նորան իւր արդի թմբութիւնից դուրս հանելու համար: Քարոզի բնաբանն էր մի շարք լուսամիտ և թարմ գաղափարներ, որոնցից միայն մէկի վերայ այս անգամ առիթ կունենանք խօսելու: Խօսքը կանանց կրթութեան մասին է: Քարոզիչ հայրը—գեր. Սահակ վարդապետ Այվատեան—բաւական պերճախօս և ազդու կերպով բացատրեց այն գերը որ կանայք խաղացել են միշտ և խաղում են մարդկային քաղաքակրթութեան գործի մէջ, և մասնաւորապէս ընտանիքի դաստիարակութեան խնդրում, ճշմարտութիւններ, որոնք վաղուց ծանօթ են ամեն քիչ շատ զարգացած հասարակութեանց մէջ, բայց որոնք դեռ արմատ չեն ձգել Թէհրանի հասարակութեան մտքերում:

Մի շատ ցաւալի իրողութիւն է այն անտարբերութիւնը որով Թէհրանի հայերը վերաբերուել են յարդ կանանց կրթութեան խնդրին և հաստատապէս կարելի է ասել որ դորա նշանակութիւնը դեռ ևս ըմբռնուած չէ մեր մէջ: „Աղջկան քնչ պէտք է բարձր կրթութիւն, բաւական է որ սէր սպիտակից ջոկէ,“ այս է առ հասարակ Թէհրանցի հայի կազմած գաղափարը աղջկանց կրթութեան մասին: Հինգ վեց տարուց ի վեր որ Թէհրանի Հայկազեան վարժարանին կից բացուած է օրիորդաց վարժարանը, երբէք աշակերտուհիների թիւը չէ անցկացել 30-ից, այլ սովորաբար տարուբերուել է 20—25 մէջ տեղ: Բողոքական և կաթոլիկ վարժարանների մէջ կայ աղջկանց աւելի մեծ մի թիւ, բայց նոցա մէջ էլ տեղի է ունենում միևնոյն երեւոյթը ինչ որ ազգային վարժարանի մէջ. հազիւ մի երեք տարի աղջիկը դպրոցի մէջ ծանօթանում է նախագիտելիքների հետ, և ահա նորա ծնողները բաւական են համարում արդէն այդչափ դիտութիւն իրանց աղջկայ համար, և դուրս են բերում և ամուսնացնում նորան:

Ի հարկէ այդքան քիչ մտաւոր պաշար ունեցող հայ աղջիկը չէ կարող կատարել ընտանիքի մէջ այն քաղաքակրթիչ դերը որ ակնկալում է նորանից. նա մինչև անգամ չէ կարող այն չափով հետաքրքրուել ազգային հարցերով, որչափով որ իւր ամուսինը հետաքրքրւում է: Նորա համար ամեն բան վերջանում է այն օրից երբ ոտքը ներս է դնում ամուսնական յարկի տակ, մինչդեռ իսկապէս իւր դերը սկսում է հէնց այդ օրից:

Մասնաւորելով խօսքը Թէհրանի համար, մենք համարձակ կարող ենք ասել որ ոչ մի տեղ կանայք այնքան անտարբերք չեն դէպի իրանց դպրոցական հնստատութիւնները, ազգային և կրօնական գործերը, որպէս Թէհրանում: Նոքա կարծես կազմում են մի առանձին հասարակութիւն որոնց համար ոչ մի նշանակութիւն չունին իւր հարեւան հասարակութեան մէջ կատարուող գործերը:

Որքան ժամանակ որ կը տևէ այդ անտարբերութիւնը դէպի կանանց կրթութեան հարցը, որքան ժամանակ որ մայրերը իրանց աղջկանց դպրոց կուղարկեն միայն մի երկու տարի, այն էլ ձեռագործ սովորելու համար, և որքան ժամանակ որ երիտասարդութիւնը ինքը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՑՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ

(Շարունակութիւն 33 թիւ)

—

Երբ ծիաւորը նստեց քարի վերայ, այս ու այն կողմից սկսեցին հարցնել „հը ատի ինչպէս արաք“. իսկ նա էլ նոցա հարցերին բաւականութիւն էր տալիս: Ես չը գիտէի թէ ինչի մասին էր ծերերի հարցը, բայց յետոյ իմացայ, որ մօտակայ գիւղում վէճ էր պատահած և քահանան կանչուած էր, գործին վերջ տալու համար:

Երկու գիւղի կամ թէ երկու գիւղացու մէջ երբ մի կռիւ է պատահում, այն ժամանակ դիմում են գիւղի ծերերին գործին վճիռ տալու համար իրանց լեզուով „աղ սախկալներին“: Ծերերը պարտաւոր են ամենայն արդարութեամբ գործը վերջացնել և եթէ մէկը անարդար գործ տեսնէ միւս անգամ խորհրդի չի կանչուիլ և այդ նորա համար մեծ պատիժ է լինում: Գործը կարեւորութիւն ունեցած ժամանակ կանչում են եւ մօտ գիւղերի նշանաւոր ծերերին: Այս պատճառով էլ Նորաշէնցւոց քահանան գնացել էր հարեւան գիւղում պատահած կռուին վերջ տալու:

Կապոյտ ծիաւորը Նորաշէնի հայր տէր Ադամն էր, Խանազահի Քառ-Երէցեան տոհմի վերջին Մելիք Բաբայի թոռն: Երբ Նորաշէնից թուրք լեռնականները դուրս եկան. առաջին անգամ այստեղ եկողը տէր Ադամն է եղել Խանազահից, որ շատ նեղութիւններ կրելուց յետոյ, վերջապէս կարողացաւ մնալ եւ իւր շուրջը հաւաքել այժմեան 33 տուն Նորաշէնցւոց. ազգային կալուածների կառավարութիւնը յանձնուած էր տէր Ադամին:

Մինչեւ երեկոյ ծերերը նստած ուռենու տակ խօսում էին, մինչեւ լուսնի կոչնակի ձայնը բոլորը եկեղեցի դիմեցին. այս եկեղեցին շինուած է 8 տարի առաջ Դավրէժի Արամեան դպրոցի փողովը: Նորաշէնցիք ուսումնարան չունին,

Այստեղից գնացի Օղա. ճանապարհի վերայ տեսայ Կիւժդիլը որի կալուածը ինչպէս ասացինք Ա-բրամեան դպրոցին էր պատկանում. այս գիւղը գընացի փորը ինչ հանդստանալու գիւղացիներին մէկը մեղ իւր տունը հրաւիրեց. Ղարադաղի թէ հայերը եւ թէ թուրքերը չափազանց հիւրասէր են:

Այստեղ մեր գլխին հաչարուեցան ծերերը եւ զանազան տեսակ հարցեր էին առաջարկում, նոքա իմ հայ լինելուն չէին հաւատում, որովհետեւ իմ եւ իրանց հարեւան հայերի հագուստի մէջ տարբերութիւն կար. բայց երբ յայտնեցի իմ ղարադաղցի լինելս, ծերերից մի պատկառելի երեսիս նայելով մի առանձին հպարտութեամբ կոչեց „էվն ըխըլան կոջա Դարադաղ, կէնա օզ բալասին չաքտի կեթրդի“. (տունդ քանդուի ծեր Ղարադաղ դարձեալ իւր որդուն քաշեց ու բերաւ) ղարադաղցիք հաւատում են թէ Ղարադաղում ծնուածը Ղարադաղում էլ կը մեռնի. թէ հողն այնպիսի մի ձգողական ոյժ ունի, որ իւր որդուց քաշում բերում է:

Մենք հասանք Օղա:

Օղան ընկած է մի ձորակի մէջ, որը երկու կողմից պատած է լեռներով. իսկ միւս երկու կողմերը

անձնական հաշիւներով զբաղուած կը լինի, փոխանակ աշխատելու լուրջ հիմքերի վերայ դնել իւր քոյրերի կրթութեան գործը, մենք չենք կարող ակնկալել որ հայ կինը խաղայ այն սուրբ և քաղաքակրթիչ դերը որ վիճակուած է իրան, և հայ կինը կը շարունակէ մնալ այն հարեմական դրութեան մէջ, որի մէջ գտնւում է այժմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌԱՇԹԻՑ

29 օգոստոս 1894

Անցեալ նամակովս հաղորդել էի, որ Սահակ ծ. վ. Այվատեանը, իւր գնալը յետաձգելով, Ռաշտի երկսեռ դպրոցների խնդիրը, պէտք է կարգադրէր։

Ժողովը կայացաւ օգոստոս 22-ին երեկոյեան, հայր սուրբի մօտը, ներկայ էին տասնից աւելի մարդիկ։

Երկսեռ դպրոցների համար, հայր սուրբը կարգադրեց, որ ներկայ հոգաբարձութիւնը, դարձեալ պէտք է մնայ իւր պաշտօնում, միայն, որովհետև անձեռնհաս է դպրոցի ուսումնական մասի վերայ մտածելու, ուստի պէտք է նոյն հոգաբարձութիւնը հրաւիրէ իրան օգնական մի քանի բանիմաց երիտասարդներ, որոնք պէտք է հսկեն դպրոցի ուսումնական մասի վերայ։

Ամսոյս 27-ին, հոգաբարձութիւնը հրաւիրեց 12 հոգի երիտասարդներ, և գաղտնի քուէարկութեամբ, ընտրուեցան 6 հոգի՝ 1) Սարգիս տէր Սարգսեան 11 ձայնով, 2) Յ. Գ. Բագիլ 10 ձայնով, 3) Աբգ. տէր Յակոբեան 9 ձայնով, 4) Համբարձ. Բարսեղեան 8 ձ. 5) Ալեքսան Յովսէփեան 5 ձ., 6) Դարչին բէկ 7 ձայն։

Ընտրուած 6 հոգիները, այժմ կազմում են մի ուսումնական յանձնաժողով (ակումբ) և նոքա ամեն կերպ պէտք է մտածեն, ուսումնարանի բարւոքման մասին իսկ դրամական մասը միայն, պէտք է հոգայ դպրոցի հոգաբարձութիւնը։

Ուսումնական ակումբը, պէտք է ունենայ, իւր կնիքը և պաշտօնական նիստերը։

Ընտրութիւնը յաջող է, և յաջողութիւն ենք մաղթում։

Joseph

ՆԱՄԱԿ ՇԻՐԱԶԻՑ

15 օգոստոս 1894

Մինչ Շահաբբասի Շիրազ բերած հայերը 500 էին, որոնց թիւը նեղութիւնների և հալածանքների պատճառով օր ըստ օրէ նուազեցաւ գաղթելով օտար երկիրներ։ Այժմ կան միմիայն 10—12 տուն հայեր որոնք գալով Նոր Ջուղայից, Բոմբէյից և Բուշեռից նոր են հաստատուել Շիրազում։ Կան նաև մի քանի տուն անգղիացիներ որ պարապւում են վաճառականութեամբ, բանկային կամ հեռագրատան գործերով։ Հայերը ունեցել են մի քանի եկեղեցիներ, բայց այժմ ունին մի փոքրիկ նորակառոյց (երկրաշարժի պատճառով փլած էր) եկեղեցի, մէկ ուրիշ եկեղեցի ևս կայ, կուսանաց անապատում, այս անապատը մինչև օրս էլ տիրում են պարսիկները որի մէջ ունին և մի գերեզմանատուն։ Անապատը այժմ կոչւում է Բիբի Դոխթարան։ Եկեղեցին ունի մէկ գիւղացի քահանայ որի վիճակը երբէք մխիթարական չէ, հազիւ թէ նա կարողանում է իւր օրուայ ապրուստը հայթայթել, եկեղեցին իբրև կալուած ունի երկու տուն և մէկ բաղնիք, երկար տարիներից ի վեր այս տները մնացել են առանց վարձի և փոխանակ եկեղեցուն մի արդիւնք տալու, շնորհիւ եկեղեցու կառավարիչների անհոգութեանը, աւերակ դառնալով աւելի մեծ վնասների պատճառ են դառնում։ Ուր է մի Աստուածասէր մէկը որ գտնեա նորոգել տար այդ տները որպէս զի աւելի չը քանդուէին, որը շատ կարևոր է որովհետև եթէ այդ տներն էլ աւերակ դառնան այն ժամանակ Շիրազի հայ հասարակութիւնը թէ քահանայից և թէ եկեղեցուց զուրկ պիտի մնայ։

Եկեղեցին ունի երկու կառավարիչներ, Կարապետ Յովհաննէսեան և Յովհաննէս Մ. տէր Սարգսեան, առաջինը հիմայ բացակայ է, որով երկրորդը միայն անկոխ կերպով կառավարում է գործը, այնպէս որ քահանայի ռոճիկը որ շատ չնչին մէկ բան է տարիներով անվճար է մնում, իսկ եթէ միւսն էլ բացակայ չը լինէ, այսու ամենայնիւ չէ կարող հակառակել միւսին և պահանջել եկեղեցու իրաւունքները։ Սորանք ոչ թէ եկեղեցուն են վնասում այլ և քահանային, որին ամսական միայն 2 դռան ռոճիկ պիտի վճարեն, որը չեն վճարում և տները տարիներով ձրիապէս նստելով չեն էլ նորոգում։ Պարսկաստանի և Հնդկաստանի հովիւ Եսայի սրբազան արքեպիսկոպոսից խնդրւում է որ այս բանը իւր բարձր ուշադրութեան առնէ և բարեհաճէ հրամայել որ վերոյիշեալ պարոնները յօգուտ եկեղեցու և մասամբ էլ յօգուտ քահանայի իրանց նստած տների վարձերը վճարեն և յիրաւի եթէ այսպէս շարունակուի ինչպէս առաջ, աւելի լաւ կը լինէր որ տեղացի ժողովուրդն մի այլակրօն հոգևորական բերէր իւր համար իբրև հովիւ և կառավարիչ եկեղեցական կալուածների, որով այսպիսի քահանայ և կառավարիչներ ունենալու պէտքից բոլորովին ազատ կը մնար։

**

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դավրէժ 20 օգոստոս 1894

„Շաւիղի„ № 29-ում Դավրէժից գրուած Ց. ստորագրութեամբ յօդուածը կարդալով անշուշտ ամէն մի անծանօթ մարդ շատ և շատ վատ գաղափար պէտք է կազմէ թէ քաղաքիս երիտասարդու-

---

ծորեր են:

Գիւղը բաղկացած է 35 տնից, որոնք ունին մի փայտաշէն եկեղեցի, քահանայ չունին, այլ տարին մի քանի անգամ տէր Ադամը այս տեղ գալով կը պատարագէ ժողովրդոց, ինչպէս Խանագալ, Գուլիզի եւ շուլինցուց: Ուսումնարան չունին:

Ղարադաղցիք չափազանց կրօնասէր են, որքան որ էլ աղքատ լինին նոքա, դարձեալ եկեղեցի պէտք է ունենան, որ ամեն կիրակի օր գնան ու աղօթեն։

Բոլոր եկեղեցիներից ունին եւ շատ ուխտատեղիք եւ իւրաքանչիւր ուխտատեղին իւր որոշեալ օրն ունի, որը տօնւում է մեծ ջերմեռանդութեամբ:

Սոցանից մէկի օրը իմ Օղա եղած ժամանակս եղաւ. ուստի նկարագրելու հարկ համարեցի, կարծեմ ընթերցողը չը պէտք է ձանձրանայ ղարադաղցւոց ուխտագնացութեան նկարագրութիւնը կարդալու համար:

Գ. ՈՒԽՏ

Զատիկի առաջի շաբաթն էր, որ ես գտնւում էի Օղայում: գիւղացիք ինձ ասացին թէ առաջիկայ կիրակին ղարադաղցւոց կարմիր կիրակին է եւ հին Զիւժի ս. Գէորգ եկեղեցւոյ տօնն է, պէտք է գնանք ուխտ. այնտեղ մեծ բազմութիւն հաւաքուած կը լինի: Ես սրտատրոփ սպասում էի այդ օրին, որ տեսնէի որպէս պէտք է լինի ուխտագնացութիւնը գիւղերում:

Հասաւ շաբաթ օրը: Գիւղացիք պատրաստւում էին առաւօտեան շուտով ուխտ գնալու համար: Հեռու գիւղերից եկածները շաբաթ օրն են գնում եւ գիշերն էլ մնում են այնտեղ: Օղայից ուխտատեղին մօտ լինելով կիրակի օրն պէտք է գնային.

Ես հեռու գիւղերից եկածների հետ շաբաթ օրը գնացի. ս. Գէորգայ եկեղեցին Օղայ'ից երեք ժամուայ ճանապարհ է, մենք հասանք այնտեղ մութին մի ժամ մնացած:

Եկեղեցին մի գետակի մօտ երկու ձորակի մէջում գտնուած բարձրատ լեռակի վերայ է շինուած: Ժայռը կտրատած ու քանդած են եւ մի փոքրիկ տափարակ տեղ լինելով շինած են եկեղեցին: Շատ նմանութիւն ունի Խանագաթի եւ Սարգսի եկեղեցիներին.

Եկեղեցին շրջապատուած է բարձր ծառերով ու մացառներով, որոնք դուրս են եկած հէնց ժայռերի միջից: Պատերի, տանիքի վերայ թուփեր են բուսած, որոնք վնասում են շէնքին, բայց գիւղացիք ձեռք չեն տալիս դոցա, ասելով մեղք է. որչափ էլ համոզում ես, որ վնասում են սակայն լսողը չը կայ:

Ես հետեւելով գիւղացւոց ջերմեռանդ կերպով աղօթեցի եկեղեցում եւ յետոյ սկսեցի քննել եկեղեցու մէջը, տեսնելու համար հնութիւններ կը լինին թէ ոչ, բայց ոչ ինչ չը կարողացայ գտնել: Գիւղացիք տեսնելով իմ հետաքրքրութիւնս. բերին ինձ ցոյց տուին մի խաչքար, որը պահուած էր սեղանում. քարը երեք կտոր է եղած այժմ. վրան փորագրուած է Ռ եւ Ձ տառերը իսկ սորին կողմը Վ եւ Թ հայոց տառերը, թէ սորա ինչ են նշանակում այդ ես չը կարողացայ իմանալ. այս քարը պահւում է իբրեւ մի սրբութիւն:

թեան և թէ „մի քանի ուսուցիչների“ մասին, որովհետև պ. յոդուածագիրը որքան խորամանկութեամբ, նոյնքան էլ ճշմարտութեամբ աշխատել է կողմնակի կերպով բոլոր երիտասարդների և ուսուցիչների գլխին թափել իւր փողոցային լուտանքները, առանց մի որ և է փաստ առաջ բերելու և յոդուածագրին վայել անաչառութիւն ունենալու, մինչդեռ նա իւր այդ յոդուածով վրէժ է լուծում անձնական հաշիւների պատճառով, „միքանի ուսուցիչներից“ և երիտասարդութեան ներկայացուցիչներից, և շատ վարպետ է ձևանում իւր և իւրայինների տիեզերահռչակ յատկութիւններով ուրիշներին պսակելու. միշտ խօսում է լանուն ազնուութեան, հասարակական և երիտասարդական շահերի, ճակատ առ ճակատ կռուելու, և ճշմարտութեան դրոշակը բարձր բռնելու մասին, իսկ ինքն ապծր Ֆ-ի շուաքի տակ իւր ամաչելուց կարմրած դէմքը թագցրած՝ ընկել է իրան հետ անձնական հաշիւներ ունեցողներին պատալելու։

Պարանի հետ համաձայն լինելով յոդուածի մէջ մատնացոյց արած կեղծ յայտարարութիւնների հեղինակների տրմարդի և պախարակելի վարմունքի մասին (թէ և ինքն էլ է կեղծ ստորագրութեամբ պարսաւում կեղծիքը), մենք մեզ թոյլ չենք տալ, ինչպէս որ պ. յոդուածագիրքն է իրան թոյլ տալիս, այդպիսի զզուելիների արածը մեր մասին փոթաթան շինելով՝ ուրիշ շատ անմեղների անունը արատաւորել և նրանց վարկը գանազան սուտ զրպարտութիւններով հասարակութեան աչքում ձգել՝ հրատարակելով իբր հեղինակ այդ յայտարարութիւնների, որով միայն մեր անձնական վրէժը լուծած կը լինենք իբրթէ։

Պարոնը աւելի լաւ կանէր, ճիշդ փաստերով հեղինակներին ցոյց տալ, որով նախ՝ ցոյց տուած կը լիներ նա, որ հասկանում է իւր քարոզների միտքը և երկարդ, գիտէ անաչառ լինելը. և այդ անելով նա վարձատրած կը լիներ հեղինակներին այնպէս, ինչպէս որ առ հասարակ վարձատրում են հասարակական յայտնի և ազնիւ գործիչներին՝ նրանց անունը և ազգանունը հրատարակելով գործերի հետ միասին։ Ինչու լուի համար անունը տալ, իսկ վատ գործի համար ծածկել, երբ այդ գործը անմիջական կապ ունի հասարակական կեանքի հետ։

Ս. Միրզոյեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի օր գեր. Սահակ վարդապետ Այվատեանն ներկայացաւ նորին բարձրութեան Սադրազամին, և գտաւ շատ սիրալիր ընդունելութիւն։

Անցեալ կիրակի գերապատիւ Սահակ վարդապետ Այվատեանը քարոզ խօսեց ս. Գէորգ եկեղեցում. բնաբանն էր կանանց կրթութիւնը, նոցա խաղացած դերը ընտանիքի մէջ, քրիստոնէութեան դերը ազգերի քաղաքակրթութեան մէջ, և վերջապէս յորդոր դէպի միութիւն և համերաշխութիւն ազգային գործերում։ Քարոզը բաւական լաւ տպաւորութիւն գործեց. եկեղեցում կար մեծ բազմութիւն. նոքա որոնք շատ գանգատւում են ժողովրդի անտարբերութիւնից դէպի եկեղեցի յաճախելը, կարող են տեսնել որ երբ եկեղեցու բեմից խօսւում է կենդանի ձայնով և հասկանալի լեզուով, ժողովուրդը միշտ աւելի եռանդով կը յաճախէ եկեղեցի, և կստանայ աւելի առատ բարոյական սնունդ։

Քանիցս մեզնից խնդրած ենք բացատրութիւն այն գումարի մասին որ երեք վերջին տարիների ընթացքում ուղարկուած է թեմական առաջնորդի կողմից ի նպաստ Շաւարին գիւղի դպրոցին, և հարցրել են թէ ինչու երեք տարուայ ընթացքում տարեկան 30 թուման ուղարկելուց յետոյ հիմայ միայն տարեկան 15 թուման է ուղարկւում։ Ահա պաշտօնական աղբիւրներից մեր ստացած տեղեկութիւնները։ Սորանից ուղիղ 10 տարի առաջ մի բարեսէր անձնաւորութեան ձեռքով Լոնդոնի մէջ ի վաճառահանդէս է կազմւում յոգուտ դպրոցական գործի։ Այն տեղից գոյացած գումարի մի մասը յատկացւում է Շավարինի ուսումնարանին։ Մայր գումարը դրւում է Կալկաթայի հայոց եկեղեցու կառավարիչների հսկողութեան ներքև, կարգադրութեամբ որ տոկոսը Ամենափրկչեան վանքի կառավարչութեան ձեռքով հաճցնուի ուր որ հարկ է։ Երբ Եսայի սրբազանը հասնում է իւր թեմը՝ հետազօտութիւն անելով այդ գումարի մասին, որ 5—6 տարիներից ի վեր իւր հասցէին ուղարկուած չէ եղել, գտնում է որ այդ գումարը մի քանի ձեռքերից փոխուելուց յետոյ մնած է լինում Նոր-Ջուղայի Կեդրոնական ուսումնարանի վարչութեան ձեռքը։ Սրբազանը հրամայում է որ նոյն վարչութիւնը յետ դարձնէ այդ գումարը Շավարինի վարժարանին։ Ահա այդ գումարն է (90 թուման) որ սրբազանը 3 տարուայ ընթացքում, տարեկան 30 թուումանով, ուղարկում է Շավարինի ուսումնարանին։ Մայր գումարը որի տոկոսը այսուհետև կանոնաւոր կերպով ուղարկուելու է Շավարինի ուսումնարանին՝ իւր մինչև այժմ բարդուած տոկոսներով այժմ պէտք է հասած լինի 1400 կ. ռուբլիի, որի տոկոսը հարիւրին 4-ով տարեկան 14 թուման չափ կարող է լինել։

Թաւրիզից մեզ գրում են հետևեալը, որի պատասխանատուութիւնը թողնում ենք լրագրի վերայ։ „Այստեղ տանկի նման իրար ետևից աճող և բազմացող, սակայն կէս շահու արդիւնք ցոյց չը տուող ընկերութիւնների մէկի նախագահը, պ. Ս. Միրզոյեանցը, իւր ընկերութեան անդամներից մէկին հրաւիրելով իբր թէ ժողովի իւր հրաւիրագիրը տուանը, ինչ-որ մի քանի դրան հաշուի համար՝ այնտեղ երկու անգամ տարբանակ է արձակում նորա վերայ։ Զը գիտ-

---

Մեր տեսած եկեղեցիներից սա ամենակարգինն է իւր զարդերով ու ջահերով, որն ուրիշ եկեղեցում չը կայ։

Եկեղեցու մօտ կայ մի աւերակ գիւղ որտեղ հին ժամանակները բնակւում էին հայեր, այս գիւղի անունը կոչում են ցածի Զիւժ. սորա անունով եկեղեցին կոչւում է Զիւժի եկեղեցի։ Եկեղեցու առաջը շինուած է երկու սրահ որտեղ ուխտաւորները պատսպարւում են դիշերը նը անձրևի ժամանակը։

Շաբաթ օրը եկել էր եւ մի աշուղ, գիշերը ուխտաւորների հետ ժամանակ անցկացնելու համար։ Եկել էր եւ պատարագի քահանան, որ ամբողջ գիշերը եկեղեցում նստած անդամ էր կարդում.

Լոյսը բարձրանալ, կոչնակի ձայնը եկեղեցու միջից լուեցաւ, մենք բոլորս եկեղեցի գնացինք եւ առաւօտեան աղոթքները վերջանալուց յետոյ դուրս եկանք։

Ուխտաւորների զուխը բացուեց։ Եկեղեցու հանդէպ կանգնած լանջի վրայից գալիս էր անթիւ ժողովուրդ։

Այր ու կին, ծեր ու մանուկ, որը ձիով, որը ոտքով, մի քանիսն էլ ոտաբոբիկ էին գալիս, նախ բարձր ժայռի միջի կիրճով իջնում էին հիւսիսային պատի մօտ եւ սկսում էին արտաքին կողմի քարերը ջերմեռանդութեամբ համբուրել, ապա մտնում էին եկեղեցի մոմերը վառելով ու ծունր դնելով դուրս էին գալիս ու գնում օջաղները պատրաստելու. իւրաքանչիւրը ունի իւր յատուկ օջաղը, որտեղ եփում են մատաղն ու կերակուրը։ Կէս օրին մի ժամ մնացած հաղիւ վերջացան գացողները։

Եկեղեցու չորս կողմ անագին տարածութեան վերայ լցուած էր ժողովուրդը։ Մատաղները նախ բերում էին եկեղեցու շուրջը 3 անգամ պտտեցնում էին եւ յետոյ տանում ու մորթում։ Մորթելուց առաջ տալիս են աղի հետ իսուն եկեղեցու հողից, որին ասում են „ինկենուն“

Ամբողջ Տիզմաի ժողովուրդը, Աղաղանէն սկսեալ մինչեւ Օղա, հաւաքուած էին այդ տեղ կայսն եւ ուրիշ տեղերից բայց սակաւ։

Մերերը հաւաքուած էին եկեղեցու առաջը, բարերի վերայ նստոտած ամեն մէկը իւր կեանքից մի բան էր պատմում։ Երիտասարդներից մէկը մատաղ էր մորթում, մէկը կրակ էր անում, միւսը ջուր էր բերում, մի ուրիշն էլ խնդրած էր անում հրացանի շիշի վերայ եւ տանում բաժանում ժողովրդին։ գլխաւորապէս ծերերին եւ աղքատներին։

Հասակաւոր կանայքը օջաղի գլխին դնած մեծ ջամչկը (շերեփը) ձեռքին մատաղը եւ կերակուրն էին եփում։

Հարսները աղջիկները ժողովրդի մէջ մտնելու իրաւունքը չունեն։ Նոքա իրանց մոմերը վառելուց յետոյ գնում են վերեւի ձորակի մէջ խմբւում. եւ բարձր ընկուզենու վերայ ջնջին (ճօճանակը) ցրզում ու ածում։ Սոքա կերակրւում են իրանց օջաներից եկած մի մի ման մատաղով։

Երբ ամեն բան պատրաստւում է, սկսում է պատարագը, բոլորն դիմում են եկեղեցի, բացի երիտասարդուհիներից։

(Կը շարունակուի)

տէնք նորան վախեցնելու համար ատրճանակը գլխութեամբ դէպի վեր է ուղղում, թէ բարեբախտաբար գնդակը վրիպում է և խեղճ երիտասարդը ազատւում է։ Այս դէպքը ցոյց է տալիս պարզապէս, թէ այդ ընկերութիւնը (որ անունով միայն գոյութիւն ունի) որպիսի անդամներից է բաղկացած, որոնց ընտրեալ նախագահը վերոյիշեալ պ. Ա. Միրզոյեանցն է։ Մի՛ ծիծաղէք, այլ խղճացէք։

—

Ռաշտից մեզ գրում են հետեւեալը։ Մեր ժողովրդի տգիտութեան չափը անսահման է։ „Շաւիղի„ № 30-ում Ռաշտից մի լուր էր տպուած, որ Դ. Լեւոնդ քահանան Մազանդարանում մի հանգանակութիւն է բացել և հաւաքել է 1060 ղրան։ Քանարքանիցից 400, իսկ Բարֆրուշից 660 ղրան, յօգուտ Ռաշտի երկսեռ դպրոցների։ Մի խումբ մարդիկ կարդալով „Շաւիղը“, սկսում են քննադատել տէր հօրը, թէ 1060 ղրան արդէն յանձնել է պատկանեալին, իսկ միւս 660 ու 400 ղրանը ուր է, երևի այդ փողերը իրան է սեպհականացրել։ Այդ պարոնները վերցնում են „Շաւիղի“ № 30-ը և գնում են տէր հօր աներոջ մօտ—տես թէ փեսադ ազգի փողերը ինչ է անում, այս խօսքերով դիմում են նորան։ Խեղճ մարդը գալիս է իւր փեսի մօտ բացատրութիւն պահանջելու, որը հասկացնում է իւր աներօջը, որ այդ պարոնները այնքան տգէտ են, որ չեն հասկացել 1060 ղրանը կազմուած է եղել Քընարքալեացի 400 ու Բարֆրուշի 660 ղրաններից։

—

Նոյն տեղից մեզ գրում են։ Այս քանի օրերս, Եալտայում, յանկարծ սրտի պայթումից, կնքեց իւր մահկանացուն, Ռաշտի դպրոցների բարերար, հայազգի յարգելի ճարտար Ստեփան Մարտինեց Լիանոզեանցը։ Յառաջիկայ կիւրակէ հոգեհանգիստ պէտք է կատարուէր։ Ռաշտում հանգանակութիւն էր բացուած և հաւաքուած էր 250 ղրան իբր աջահամբոյր Ս. Ծ. վ. Այվազեանի, բայց հայր սուրբը չը համաձայնուեց վերցնել, այլ յանձնեց յօգուտ երկսեռ դպրոցների։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Շանխայից օգոստոս 22-ին հեռագրում են։ Այսօր հասած հեռագրին նայելով, անցեալ ուրբաթ չինական զօրքը Փին-Քիանկում մեծ յաղթութիւն է տարել ժապոնացւոց զօրքի վերայ։ Ժապոնական զօրքը յաղթուելով դէպի Շանխայ է փախուստ տուել որտեղ գիշերը անցրել են։ Միւս օրը չինական զօրքերը յարձակել են նորանց վերայ և նորանց վռնտել են խրամատներից։ Սպանուածների թիւը յայտնի չէ։ Շուտով մի ուրիշ պատերազմ էլ տեղի կունենայ, որովհետև ժապոնական նոր զօրքերը Ֆիուզանում ցամաք են ելել։

—Լոնդոն 23 օգոստոսին հեռագրում են, ռուսաց կայսրը իսկական էնֆլուէնձա ունի որով քիչ տկար է։

—Պետերբուրգ 24 օգոստոսին հաղորդում են, որ կայսեր տկարութեան պատճառով զինւորական մեծ վարժութիւնները և փորձերը որ աշնանը տեղի էին ունենալու Մօլէնսքում, արգիլուեցան։

—Շանխայ 25 օգոստոս։ Փին-Քիանկում օգոստոս 17-ին և 18-ին չինացւոց և ժապոնացւոց մէջ տեղի ունեցած պատերազմը հետեւեալ կերպով է եղել։ Վեց հազար հոգի ժապոնական զօրք որ դեռ նոր նաւից դուրս էր ելել և գետեզերը բռնելով դէպի կղզու ներսն էր յառաջանում, այդ միջոցին չինական հեծելազօրը յանկարծակի յարձակւում է նորանց վերայ, ճեղքում և նորանց երկու մասի բաժանելով ուղղակի միջից անցնում է։ Այդ պարագայում չինացւոց ռազմամթերանոցը և թնդանօթները որ մէկ բարձրութեան վերայ տեղ էին բռնել, սկսում են կրակ անել պատճառելով ժապոնական զօրքին անձի մեծ կորուստներ։ Ժապոնական զօրքը փախչեց մինչև այնտեղ ժապոնական նաւերի թնդանօթները կարող էին նորանց պաշտպանել, ասւում է թէ ժապոնացիք պատերազմում աւել քան 1300 հոգի կորցրել են։ Չինական ամբողջ զօրքի թիւը 34,000 են. ժապոնական զօրքը հիւսիս գնացող լեռնային ճանապարհը փակել է։ Չինական զօրաց հրամանատարները հաստատապէս որոշել են որ մինչև օգոստոս 22-ը կրկին մի յարձակում գործեն։

—Լոնդոն օգոս. 28-ին հեռագրում են, որ Բոմբէքես Ռաջայի խռովասէր զինուորները խարդախօրէն յարձակում են գործել հոլանդական զօրքի վերայ, զօրավար Վոխանը, տասն և չորս սպաներ, և 150 զինուորներ սպանուել են սակայն Հոլանդիոյ պետութեան ներկայացուցիչը ողջ է մնացել։

—Փարիզ օգոստոս 28. լուր է ստւում որ Թամբուքթուի մէջ թշնամի ազգաբնակութիւնները յարձակուել են Ֆրանսական երկու վաշտ զօրքի վերայ և պաշարել բոլորին և երեք օրւայ արիւնահեղ պատերազմից յետոյ Ֆրանսական զօրքը բոլորովին ջարդուել է։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Հայ լրագրութեան հարիւրամեայ“ պատկերները հասած լինելով խնդրում է բաժանորդներից որ ներկայացնեն իրանց ստացականները եւ ստանան խմբագրութիւնից իրանց պատկերները։

Սոյն...94 թուից Դավրիժում կազմուած է „Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն, որի նպատակն է ժողովրդական գրադարաններ բանալ Ատրպատականում։ Ընկերութիւնը սրտանց դիմում է յարգելի հեղինակներին, հրատարակիչներին եւ նւիրատուներին, որ բարեհաճեն յօգուտ ընկերութեան դրուելիք նիւթական եւ այլ նուէրներն ուղարկել „Շաւիղի“ խմբագրութեան։

Դավրէժում մեր հասցէն է՝ „Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն. Société de la Bibliothèque des „Amis des lettres“ Tauris (Perse)

Զանազան արժէքներով պատրաստ եմ գնելու ՊԱՐՍԻՑ կամ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ, ՆՈՐ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ։ Խնդրում է վաճառողներից ուղարկել իւրեանց ՆՄՈՅՇՆԵՐԸ վերջնական արժէքը յայտնելով։ Պատասխանները ընդունելի չեն։
Դիմել՝ Հրանտ Յ. Մարիմեան, Դավրէժ